№ 210 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 11 **1899** ՀԻՆԳՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 11 № 210

ՔԱՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ".
Կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Բաստարաթութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Բաստարաթութիւնների համար վճարում են
ուրբաթնչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Միջազգային նոր ժողովների սկզբնաւորութիւնը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Նամակ Շուշուց. Նամակ Արմաւիրից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ԲՐՍԱ.—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Անպատրաստ ժողովուրդ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆՈՐ ԺՈՂՈՎՆԵՐԻ ՍԿԶԲՆԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

—

Միջազգային խոշոր ժողովների շարքին աւելացաւ և մի նոր միջազգային ժողով, որ մի քանի շաբաթ սրանից առաջ կայացաւ Ամերիկայի Ֆիլադելֆիա քաղաքում: Դա միջազգային առևտրական առաջին ժողովն էր, որ կազմակերպված էր ընդարձակ ծրագրով և գրաւեց թէ՛ պետական անձերի և թէ տնտեսագէտների խորին ուշադրութիւնը: Ժողովի պարապմունքների առարկան առևտուրը չէր նեղ մտքով, այլ միջազգային յարաբերութիւնների վերաբերեալ այն բոլոր խնդիրները, որոնք ազդում են արդիւնագործութեան զարգացման և արդիւնքների վաճառահանութեան վրա: Ժողովի զեկուցումները վերաբերում էին մի քանի քաղաքական հարցերի, որոնց մէջ նշանաւոր տեղ էր բռնում Չինաստանի, Միջին Ասիայի և ուրիշ դրանց նման երկիրների գոյութեան հարցը:

Ամերիկայի ժողովը բազմաթիւ զեկուցանողների և հռետորների բերանով յայտնեց այն կարծիքը, թէ չը պէտք է ձգտել նուաճելու կամ բաժանելու այնպիսի երկիրներ՝ ինչպէս, օրինակ, Չինաստանն է, այլ պէտք է միայն նրանց դարձնել իրեւ բոլորովին բաց և ազատ մի ասպարէզ օտարների մրցութեան համար, ուրիշ խօսքով՝ ստեղծել այն՝ ինչ որ յայտնի է «բաց դուռ» (open door) անունով: Դարձնելով Չինաստանը, Պարսկաստանը, Թուրքիան ազատ դռներ, եւրոպական և ամերիկական արդիւնագործները կարողութիւն են ստանում անարգել կերպով մտնել երկրի մէջ և կազմակերպել մի շարք արդիւնագործական և առևտրական գործառնութիւններ: Այնուհետև՝ միայն մրցութիւնը, միայն արդիւնքների էժանութիւնը և բարձր յատկութիւնն են որոշում այս կամ այն ազգի, այս կամ այն ֆիրմայի առաւելութիւնը և յաղթութիւնը:

Առևտրական ժողովի առաջին աջող փորձը, որին ներկայ էին Անգլիայի, Ռուսաստանի, Գերմանիայի, Չինաստանի, Եապոնիայի և ամերիկական պետութիւնների ներկայացուցիչները, գրաւական է, որ միջազգային համախմբումների այդ նոր ձևն էլ կը ստանայ ընդարձակ զարգացում, և բազմաթիւ խոշոր տնտեսական, մաքսային և քաղաքական խնդիրներ, որոնք կապ ունեն պետութիւնների յարաբերութիւնների հետ՝ քննութեան առարկայ կը դառնան ապագայ ժողովներում միջազգային շահերի տեսակէտից, որոնց մէջ դուցէ վերջապէս նշանաւոր տեղ կը բռնեն և այն երկիրների շահերը, որոնց հարստահարելու տենչով մրցութեան մէջ են մտել օտար պետութիւնները իրանց դրամատէրերի անվերջ խմբերով:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

—

Երէկ, խօսելով անգլօ-տրանսվաալեան պատերազմի մասին՝ մենք ասացինք, որ ամբողջ քաղաքակիրթ մարդկութեան համակրութիւնը բօէրների կողմն է, և հանրային այդ զգացմունքի մէջ պէտք է տեսնել մարդկայնութեան գաղափարի յաղթանակը, մի գաղափարի, որ միշտ ատել է թոյլին հարստահարող ոյժը, գայլի բարոյագիտութիւնը, որ ամբողջապէս հիմնված է սուր ատամների վրա: «С. Петер. Вѣд.» լրագիրը այսպէս է բացատրում այդ ընդհանուր համակրանքի պատճառներից մէկը.

Մի զարմանալի թարմութեան, երիտասարդութեան չը վատնած ոյժի մի ահագին պաշարի բուրմունք է գալիս Աֆրիկայի այդ անկիւնից. բուրում է մարդկութեան գարունը: Պատմութեան մէջ մենք գիտենք մի հատ օրինակ այդպիսի անհաւասար կռիւ—այն, թէ ինչպէս յոյները պաշտպանում էին իրանց հայրենի հողը պարսից արշաւանքի դէմ: Բայց դա այնքան հին պատմութիւն է, որ արդէն հէքիաթ է դարձել: Բօէրները նորից վերակենդանացրին անցեալի այդ սուրբերները: Նրանք ակնյայտնի կերպով ցոյց տուին, թէ ինչ կարող է անել նոյն-իսկ մի մանրիկ ազգ, որի մէջ ուժեղ է սէրը դէպի ազատութիւն և անկախութիւն, ուր իւրաքանչիւր քաղաքացի ներկայացնում է որոշ կերպով կազմված անհատ, որ ունի ուժեղ բնաւորութիւն և կամք, զարգացած նախաձեռնութիւն: Զարմանալի խիստ է զանազանութիւնը, որ կայ այս հոլանդական ագրարակատէրերի բարոյական կերպարանքի և մեր ժամանակի ընդհանուր թուլամորթութեան մէջ: Դեկադենդութեան օրեր, քաղաքական խորին անտարբերութեան օրեր—և յանկարծ բօէրները: Էլ ինչ հակապատկեր կարող է սրանից խիստ լինել: Այստեղ էլ կայ մի պատճառ այն համակրութիւնների, որոնք եւրոպական ցամաքի բոլոր ծայրերից ուղարկվում են բօէրներին:

Պատճառներից մէկը, այո. բայց եթէ չը լինէր էլ բօէրների այդ կլասիքական առաքինութիւնը՝ դարձեալ չէր կարելի չը համակրել նրանց, քանի որ նրանք խաղաղ երկրագործներ են, բաւականանում են իրանց ստացուածքով և կամենում են մի կտոր հող ունենալ՝ երկրագործի քրտինքով ողողելու համար...

*

Բագուի մէջ այս տարվայ մայիս ամսին մի սպանութիւն տեղի ունեցաւ. Գրիգորեանց անունով մի երիտասարդ «Անի» ճաշարանում սպանեց իր ընկեր Զուրաբեանցին: Գործը մի քանի ժամանակ առաջ քննվեց Բագուի նահանգական դատարանում. այդտեղ պարզվեց այն հանգամանքը, որ Գրիգորեանց սիրում էր մի աղջկան, պատրաստ էր պսակվել նրա հետ, բայց մի դեղեցիկ օր իմացաւ, որ աղջիկը վաճառել է իր կուսութիւնը, և գնողը եղել է Զուրաբեանցը. այդ պատճառով վճռում է սպանել թէ՛ Զուրաբեանցին և թէ իրան. բէվոլվերի հարուածը վերջ է դնում Զուրաբեանցի կեանքին. բայց այնտեղ պատահած մի մարդ թոյլ չէ տալիս, որ Գրիգորեանց սպանէ իրան: Քննելով այդ դատաստանական գործը՝ «Сѣверній Курьеръ» լրագիրը ասում է.

Աղջկայ ստրկական դրութիւնը հայերի ընտանիքում, կրթութեան պակասութիւնը և կատարեալ կղզիացումը—ահա այն պատճառները, որոնք ստեղծում են այսպիսի մռայլ դրամաներ: Արշալոյսը, որ փայլել է ռուսների համար և տալիս է կրթութիւն ստանալու և անկախութեան հասնելու հնարաւորութիւնը՝ դեռ չէ դիպել այլազգիների կանանց և նրանց համար շատ ծանր է ապրել խուլ պատերի յետևում: Կանայք և աղջիկները դեռ ստրկուհիներ են, կամ երևան են գալիս իբրև շահաւէտ ապրանք, և իւրաքանչիւր քայլ դէպի առաջ թանդ գնով է ձեռք բերվում:

Զուրանալով որ հայ կնոջ դրութիւնը բաւական ճիշտ է նկարված այս պարբերութեան մէջ՝ մենք կասենք, որ յարգելի լրագիրը այս դէպքի մէջ մի կողմնակալ սխալի մէջ է ընկել. Գրիգորեանցի և Զուրաբեանցի մէջ կռուածաղիկ դարձած աղջիկը հայ չէ, այլ ռուս:

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

—

Հոկտեմբերի 30-ին

Այստեղի Բարեգործական ընկերութիւնը պատրաստվում է մի երեկոյթ տալու, որի համար արդէն իրաւունք է ձեռք բերած: Այդ նպատակով ընկերութիւնը ժողով էր կազմել, որտեղ ներկայ էին 15 օրիորդ:

Զարմանալի փոփոխութիւն: Առաջներում, երբ կանայք էին հարկաւորվում հասարակական այս կամ այն գործում մասնակցելու համար՝ շատ դժուարութիւններ էին լինում: Այժմ այդ դժուարութիւնները հասարեա թէ վերջանալու վրա են: Վերջերումս օրիորդները ոչ միայն թոյլ չեն տալիս իրենց երկար ու բարակ խնդրելու, ինչպէս այդ լինում էր առաջներում, այլ ուրախութեամբ խոստանում են մասնակցելու ամեն մի բարի գործի: Այս անգամն էլ ուրախութեամբ խոստացան մասնակցել երգեցիկ խմբին: Երեկ ես էլ ներկայ էի փորձերին և տուն վերադարձայ հիանալի տպաւորութեան տակ: Պիտի տեսնէիք, թէ ինչպիսի կենդանութիւն և աշխոյժ է տիրում այդ երկու սեռի պատկանող մատաղ սերնդի մէջ այն բոպէներում, երբ նրանք ընդհանուր ոյժով մասնակցում են որևէ գործի:

Բայց ինչ արած, որ ամբոխը, հեւանելով իր ապականված հոգու ձգտումներին՝ թունաւորում և խանգարում է ամեն մի շարժում: Ամբոխի կեղտոտ երևակայութիւնը ինչեր ասես որ չէ ստեղծում և վերագրում սրան կամ նրան: Նա ամբողջապէս մի դժոխքի բերան դարձած, սատանայի թեերով տարածում է իր հնարած լուրերը: Բայց շատ լաւ կը լինէր, եթէ մեր յարգելի պարոնները և օրիորդները ուշադրութիւն չը դարձնէին այդ տեսակ ասէ-կոսէներին, այլ շարունակէին իրանց ճանապարհը առանց յետ նայելու: Թող խոր համոզված լինեն, որ յաղթութիւնը միշտ իրանց կողմը պէտք է լինի և երբէք ամբոխը չը պիտի կարողանայ ընդդիմադրել ժամանակի հսկայական ոյժին: Հինը միշտ պիտի ենթարկվի նորին: Ես բոլորովին չեմ հերքում հասարակական կարծիքը. նա ունի իր նշանակութիւնը մի որոշ չափով. բայց իմ խօսքը զրպարտութիւնների մասին է, որոնք կազմում են մեր քաղաքացիների ամենամեծ զուարճութիւնը: Մէկին անձնական հաշիւներից դրդված՝ մէկին վերաբերեալ մի բան է հնարում և հաղորդում միւսին: Այս վերջինը, առանց փաստերի և ապացոյցների, հաւատում է և ինքն էլ իր հերթում հաղորդում երրորդին: Այսպէս տարածվում է քաղաքի բոլոր դասակարգերի մէջ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆՊԱՏՐԱՍՏ ԺՈՂՈՎՈՒՐԴ

—

Լրագրութեան մէջ դարձեալ միմեանց յետևից բողոքներ են լսվում վաշխառութեան դէմ, որը սպառնում է վերջին հարուածը տալ մեր գիւղացիներին: Այդ հիւանդութիւնից, ինչպէս գիտենք, քաղաքակիրթ երկիրների ազգերն իսկ ազատ չեն, օրինակ՝ Անգլիայի գիւղացիները, որոնք ինքնօգնութեան գործում շատ բարձր են մեր մոլորված գիւղացիներից: Աւելորդ է պնդել, որ մեր գիւղերում վաշխառութիւնը գոյութիւն ունի շատ հնուց և խրօնիկական հիւանդութեան նըման խոր արմատներ է տարածել, և նրանից ներկայ պայմաններում ամենամարդասէր օրէնքներն էլ անզօր են գիւղացիներին պաշտպանելու:

Ամեն մի վնասակար գործողութիւն նախատելի է առհասարակ ում կողմից և լինի, բայց մենք երկար տարիների դիտողութիւններով և փորձերով ստիպված ենք պնդել, որ վաշխառուների գլխին լոկ բանաւոր նախատինք թափելով՝ ոչ մի իրական օգնութիւն տրած չենք լինի ժողովրդին թշուառութիւնից ազատելու, որի գլխաւոր պատճառը սովորած ենք համարել միմիայն վաշխառուներին: Վաշխառութիւնն է առաջացնում ժողովրդական թշուառութիւն (սընանկութիւն), թէ գոյութիւն ունեցող աղքատութիւնն է ծնում, զարգացնում վաշխառութիւնը ժողովրդի մէջ:

Եթէ որևէ մէկը դիմում է փոխառութեան՝ հասկանալի է, որ դիմելու գլխաւոր պատճառը ստիպողական կարիքն է: Կան փոխառութեան դիմողներ, որոնք նպատակ ունեն մի որևէ առևտրական ձեռնարկութիւն սկսել մեծ շահ ստանալու նպատակով. կան փոխառուներ, որոնց եկամուտը բաւարարութիւն չէ տալիս նրանց կեանքի փարթամ պահանջներին, զուարճասիրութեանը, խաղամոլութեանը, զեղխ կեանքին և այլն: Այդպիսիները գտնվում են քաղաքներում, որոնց մասին մենք չենք էլ խօսի:

Բայց երբ փոխառութեան է դիմում հողագործը, չարքաշ կեանքով ապրող գիւղացին՝ դրա պատճառն է ստիպողական, անհրաժեշտ պահանջը՝ լոկ գոյութիւն պահպանելու համար. նրան հարկաւոր է նիւթական միջոց իր պարապմունքը շարունակելու, որով թէ՛ իր գոյութիւնը պաշտպանած կը լինի և թէ քաղաքակիրթ կեանքով ապրող ոչ-գիւղացիներին անունդ կը մատակարարէ:

Սակաւահողութիւն և բնական պատահար. այնպիսի սարսափելի արտայայտութիւն ունեն այդ երկու բառերը, այնպիսի չարիքներ են ծնում այդ պայմանները, որ դրանց հետ համեմատած՝ մեծ բարիք է հողագործի համար վաշխառուի մշտական գոյութիւնը: Այդ բառերը կեանքի և մահուան խնդիրներ են անոյա, թշուառ գիւղացու համար, որոնցից ազատվելու համար գիւղացին երկնային բարիք կը համարէ վաշխառուի հետ գործ ունենալ: Ապացոյցի համար բերում ենք հետևեալ ճիշտ փաստերը:

Մենք դեռ անցեալ տարի ենթադրաբար գուշակել էինք մեր յօդուածներից մէկում, որ ներկայ տարում ես ցանքսը կարող է անաջող լինել և նախօրօք նախապաշտպանութեան դիմելու անհրաժեշտ հոդածութիւնը առաջարկեցինք. բայց շատերը մեզ միամիտ անուանեցին, պընդելով, որ չար վաշխառուների մոտ և բանկերում գրաւ դրած ցորենի մեծ պահեստներ կան: Ցաւելով ասում ենք այժմ, որ մեր ենթադրաբար գուշակածը կատարվեց աւելի սարսափելի կերպով:—Անցեալ ձմեռն անցաւ խիստ մեղմ կերպով, բարձրակատար լեռներն անգամ ծածկվել էին ձիւնի շատ չնչին, նօսր սաւանով, որի պատճառով հողը զրկվեց խոնաւութեան անհրաժեշտ քանակութիւնից. մեղմ ձմրանը յաջորդեց աւելի մեղմ, սակաւանձրև գարունը: Ժողովուրդը, օգտվելով եղանակի անխառն, անդորը դրութիւնից՝ թէ լեռնային և թէ դաշտային տեղերում մեծ աջողութեամբ և մեծ քանակութեամբ սերմ ցանեց: Թէպէտ սերմնացանութիւնը վերջանալուց յետոյ մի քանի անգամ տեղացին յորդ անձրևներ, բայց բուսականութեան աճելը հէնց սկզբից կատարվում էր խիստ դանդաղ կերպով: Ցանքսերի դանդաղ աճելը նկատելով՝ ժողովուրդը մեծ եռանդով ջրովի տեղերը սկսեց ջրել, բայց լեռնային տեղերում այդ բանն անօգուտ անցաւ. ջրելուց երկու օր չանցած՝ արտերում նկատելի էին լինում ճեղքուածներ. հասկանալի էր, որ հողը հիւանդ է, կենսատու հիւթերի պակասութիւն էր զգացվում: Ցաջորդեց երկարատև երաշտը. «դէմի» տեղերում ցանքսերը 2—4 վերշոկ հազիւ բարձրացան և շատ նուազ հասկ բռնելով՝ չորացան, իսկ ջրովի տեղերը հազիւ կեանքի նշոյլ էին ցոյց տալիս: Լեռների ժշտանոս աղբիւրներից շատերը չորացան բոլորովին. Արաքս գետի ջուրը այնքան նուազեց, որ Մարգարա գիւղից ցած ջուր չէր գնում. Դաշքուռուն գիւղից ցած, ջուր չը լինելու պատճառով՝ բաժակի յոյս չը տուող արտերից շատերը ժողովուրդը ամառնաներկ արեց՝ աշնանը ցորեն ցանելու համար:

Ղարսի և Երևանի նահանգում սարսափելի երաշտը ընդհանուր էր:

Սուրմալուի գաւառում Արաքս գետի ջուրը այնքան պակասեց, որ ինժեներ-գիդրաւլիկը ստիպվեց Էջմիածնի գաւառը գնացող առուների ջրերը կիսել և յետ տալ գետի մէջ, որպէս զի մի թեթև օգնութիւն հասցրած լինի Սուրմալուի գաւառի ցանքերին:

Լեռնային տեղերի «դէմի» գարիները և սպիտակահատ ցորենները առանց հասկ բռնելու բոլորովին չորացան. շատ արտեր կեր արեցին անասուններին. գոհ էր ժողովուրդը այն արտերից, որոնց հնար էր լինում ձեռքով փետել՝

Օրիորդների մեծամասնութիւնը, ենթարկվելով այդ լուրերի ազդեցութեան, ընկճվում է և յետ կանգնում գործելու ճանապարհից: Բայց մենք ունենք թէ օրիորդներ և թէ տիկիններ, որոնք համեստաբար շարունակում են իրանց գործը, առանց ուշադրութիւն դարձնելու հատագրութիւնների զզուելի զրպարտութիւններին: Ցանկալի կը լինէր, որ միւսներն էլ հետևէին այս վերջիններին օրինակին:

Տիկին

ՆԱՄԱԿ ԱՐՄԱՒԻՐԻՑ

—

Նոյեմբերի 25-ին

Արմաւիրի հայ ժողովուրդը ունի թէ տղայոց և թէ օրիորդաց ուսումնարան: Օրիորդաց ուսումնարանի շէնքը խիստ փոքր էր և հէնց այդ պատճառով չինեցին նորը: Օրիորդներին փոխադրեցին տղայոց ուսումնարանը, իսկ տղաներին՝ նորակառոյց դպրոցը: Այդ շէնքը մի ահագին երկյարկանի չինութիւն է: Տեսնողի վրա թողնում է բարձրագոյն դպրոցի տպաւորութիւն: Ուսումնարանը կոչվում է Ալէքսանդրեան, ի յիշատակ ի Տէր հանգուցեալ Ալէքսանդր II Կայսրի: Շատ յարմար չէնք է. մանաւանդ աչքի է ընկնում դեղեցիկ և ընդարձակ դահլիճը:

Անցեալ 19-ին կատարվեց նորաշէն ուսումնարանի բացման հանդէսը: Դպրոցը լի էր ժողովրդի խուռն բազմութեամբ: Ներկայ էին՝ նահանգապետի օգնականը, ուսուցիչները, ուսումնարանի դիրեկտորը և այլ շատ աստիճանաւորներ: Հայ հոգևորականները օրհնեցին ուսումնարանը և կատարեցին գոհաբանական մաղթանքներ:

Օրհնութիւնից յետոյ ամբիոն բարձրացաւ ազգ ուսուցիչը և յիշեցրեց ժողովրդին, թէ ինչպէս առաջ Արմաւիրն ունեցել է մի միդասեան ուսումնարան և մի ուսուցիչ, այժմ աւելի առաջ գնալով՝ ունի երկուսը և լիայոյս ենք, որ սրանք աւելի կը բարձրանան: Ապա դիրեկտորը խօսեց և յորդորեց, որ այդ երկդասեանը վերածեն վեցդասեանի: Այնուհետև խօսեցին միւս աստիճանաւորները: Ժողովուրդը, ի պատիւ ուսումնարանի, իր ծախսով հացկերոյթ էր պատրաստել, որը տեղի ունեցաւ դահլիճում:

Նախ՝ խմեցին Թագաւոր Կայսրի կենացը և բարեմաղթեցին երկար ու թանդագին օրեր: այդ կենացը ժողովուրդն ընդունեց բուռն ծափահարութեամբ: Դանլիճը թնդում էր կեցցէների աղաղակով: Ժողովուրդը խմեց ներկայ հիւրերի կենացը, իսկ վերջիններս փոխադարձաբար խմեցին ժողովրդի կենացը: Ի վերջոյ խմեցին ուսումնարանի յարատևութեան կենացը և ցանկացան, որ այդտեղից դուրս դան պարկեշտ և հաւատամանուկներ:

Արմաւիրի ժողովուրդը ջերմեռանդ է և այդպիսի դէպքերում մոռացութեան է տալիս խնայողութիւնը: Տեղիս հայոց եկեղեցիները բարեկարգ և չէն վիճակի մէջ են: Կայ քառաձայն խումբ:

Ա. Հերթեցեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Ղարայազ, Նոյեմբերի 7-ին

«Մշակի» այս տարվայ 178 և 185 համարների մէջ, որոնք ի միջի այլոց միայն այս օրերս ընկան իմ ձեռքը, Ախալքալաքից երկու նամակ կայ տպված, մէկը պ. Սալլիմեանի և միւսը՝ պ. Ղուկասեանի ստորագրութեամբ: Առաջինում պ. Սալլիմեան գրում է. «... բարձր ուսումով մի «ինտելիգենտ» կապալառու մեր քաղաքային հողերից 40 թէ 50 դեսեատին հող է վերցրել կապալով, դեսեատինը 5—6 բուբլով, և ոչնչով չը տարբերվելով իրան շրջապատող արխիդուխանչիկներից՝ այդ հողը տուել է Կուլիկամ գիւղի մի քանի ընակիչներին (սխալ է, միայն 2 հոգու—Դաբբէլ Այվազեանցին և Համբար Առաքելեանցին), որ նրանք մշակեն, ցանեն, հնձեն, կալսեն և բերքը կիսեն «ինտելիգենտ» կապալառուի հետ: Հողից զուրկ տգէտ գիւղացին ստիպված է եղել դիմել ինտելիգենտ կապալառուին, իսկ վերջինս նրա արիւն-քրտինքով վաստակածի կէսը խլելու գայլային պայման է թելադրել թշուառին...» Նամակի վերջում նա սպառնում է. «... մենք մի ուրիշ անգամ կը վերադառնանք այս հրէշաւոր երևոյթին և դիպուածաւոր կապալառուի այս քաջագործութիւնը մերկապարանոց կը դնենք Պետրովսկայա ակադեմիան աւարտած իր ընկերների առաջ»: Երկրորդ նամակում պ. Ղուկասեան գրում է սրա շարունակութիւնը այսպէս. «... որովհետև վերջին տարիներում այդ ակադեմիան աւարտածներից ընդամենը երկու հոգի է-ինք գտնվում Ախալքալաքում... այդ պատճառով հարկաւոր եմ համարում յայտնել «Մշակի» ընթերցողներին, որ ես երբէք իմ կեանքում կապալառութեամբ չեմ պարապել և քաղաքային հողերը կապալով երբէք չեմ վերցրել»:

Պետրովսկայա ակադեմիան աւարտած և Ախալքալաքում պաշտօնով ապրող երկրորդ անձնաւորութիւնը ես էի. ուրեմն պ. Սալլիմեան վերոյիշեալը իմ մասին է գրել: Սակայն տեսնենք, նա որևէ հիմք կամ իրաւունք ունի այդ խօսքերը շռայլել իմ հասցէին:

Նախ և առաջ ես էլ պ. Ղուկասեանի նման պէտք է ասեմ, որ երբէք Ախալքալաքի քաղաքային հողերից կապալով մի սաժէն հող անգամ չեմ վերցրել, թէև կապալով հողեր վերցնելը և մշակելը ինտելիգենտ մարդու համար ամենևին ամօթաբեր բան չեմ համարում... Սակայն ընթերցողին իմ և պ. Ղուկասեանի ասածից առաջացած կախարդած շրջանից դուրս բերելու համար պէտք է սկսեմ քիչ հեռուից:

1877 թուի սկզբին ես գրաւոր կերպով դիմեցի Ախալքալաքի քաղաքային վարչութեանը, առաջարկելով յանձնել ինձ կապալով մշակութեան համար քաղաքապատկան արօտատեղերից 100 դեսեատին հող: Վարչութիւնը, դրա նման հիմնարկութիւններին յատուկ սովորութեամբ, ձգձգելով հարցի որոշումը՝ միմիայն նոյն թուի օգոստոսի վերջին ամուրդ նշանակեց այդ առիթով: Այդ ժամանակ ես արդէն յետ էի կանգնել իմ ժառգութիւնից, ուստի և ամուրդին չը մասնակցեցի: Վարչութեան նշանակած հողը, ընդամենը միայն 50 դեսեատին տարածութեամբ, ամուրդով մնաց տխալքալաքցի, Պետերբուրգում վախճանված, պ. Վ. Վարդանեանցին, որն ինձանից համաձայնութիւն ստացաւ՝ մշակել և կանոնաւորել այդ հողը զուտ արդիւնքի կէսի վարձատրութեամբ, այն պայմանով, որ ինքն, Վարդանեան պիտի տար բոլոր հարկաւոր գումարը՝ գործիքներ, անասուններ գնելու, մշակներ վարձելու և առհասարակ մշակութեան համար բոլոր ծախսերը հոգալու: Այդպիսով ես ոչ թէ կապալառու, այլ լոկ կառավարիչ եղայ:

Նոյն թուի դեկտեմբերին, երբ ես իմ ունեցած հաւատարմագրի հիման վրա՝ Վարդանեանի կողմից նոտարական կարգով պայման կապեցի քաղաքային վարչութեան հետ և արդէն պատրաստութիւն էի տեսնում մարդիկ վարձելու գարնան աշխատութիւնների համար՝ յանկարծ Վարդանեանից նամակ եմ ստանում, որ նա այլ ևս անկարող է կոպէկ անգամ ուղարկել կապալով վերցրած հողերը մշակելու համար, և այդ պատճառով խնդրում է ինձանից մի կերպ այդ հողերը «գլխից ազատ անել»: Սիրոց չունենալով ինքս մշակել այդ հողերը, միւս կողմից չը կամենալով—ոչնչացնելով ինձ տուած հաւատարմագիրը—անել դրութեան մէջ դնել Վարդանեանին և որևէ վնաս հասցրած լինել քաղաքի շահերին՝ ես սկսեցի դիմել զանազան մարդկանց, առաջարկելով վերցնել այդ հողերը ամենաձեռնտու պայմանով: Ի միջի այլոց ախալքալաքցի պ. Աղէկեանի միջոցով (որի հետ սկզբումը կոմբինացիա կազմեցինք այդ հողերը միասին մշակելու և որը սակայն չը յաջողվեց) առաջարկեցի վերցնել այդ հողը, վերադարձնելով միայն արած ծախսը՝ կուլիկամցի հարուստ գիւղացի Դաբբէլ Այվազեանցին, որի ձեռքին է գտնվում այդ հողերի մեծ մասը և որի համար կոկորդիլոսի արցունք է թափում պ. Սալլիմեանը իր թղթակցութեան մէջ: Սակայն բոլոր իմ աշխատանքս զուր անցաւ: Վերջապէս 1898 թուի փետրուարին, երբ ախալքալաքցի պ. Ս. Ցարուբիւնեանցը առաջարկեց ինձ ընկերանալ, վճարելով հողի կապալավարձը և գիւղացիներ գտնելով հողը մշակելու համար՝ այդ առաջարկութիւնը ես ուրախութեամբ ընդունեցի, միևնոյն ժամանակ յայտնելով պ. Ցարուբիւնեանցին, որ ես շուտով հեռանալու եմ Ախալքալաքից: Պ. Ցարուբիւնեանին ես միայն մի պայման առաջարկեցի, այն է, որ իմ խոսաման հաւաձայն՝ յիշեալ հողերից 10 դեսեատին Վարդանեանի վրա նստած գնով պէտք է յանձնվէր քաղաքային դպրոցի երկրագործական բաժնին, որը նա ընդունեց յօժարութեամբ:

Այնուհետև դեռ մօտ մի տարի մնացի Ախալքալաքում, սակայն սկզբից մինչև վերջը ես ոչ մի յարակցութիւն չեմ ունեցել հողերը մշակող գիւղացիների հետ, նրանց ոչ տուել եմ և ոչ ստացել նրանցից երբևիցէ ոչ մի հատիկ ցորեն կամ գարի, կամ մի կոպէկ փող: Եթէ չը հաշուենք այն, որ մէկ-մէկ հանդիպել եմ դրանց արտերը, խորհուրդներ եմ տուել, սարքել եմ նրանց նոր գնած եւրոպական գութանը և հինգ օրվայ ընթացքում առաւօտից մինչև երեկոյ առանց հանգստութեան, առանց մի կտոր հաց կամ մի կաթիլ ջուր առնելու բերանս՝ այդ հողերը չափել և բաժանել եմ տասնեակ կտորների, ինչպէս խնդրել են գիւղացիները, առանց այդ և միւս աւելի փոքր աշխատութիւններիս համար մի կոպէկ վարձատրութիւն ստալու:

Որպէս զի հարցը լուսաբանված լինի ամեն կողմից և ես ստիպված չը լինեմ նորից դիմել նրան՝ պէտք է պարզաբանել՝ մի դուցէ պ. Ցարուբիւնեանցը իսկապէս «գայլի պայման» է առաջարկել «թշուառ գիւղացիներին»: Ի միջի այլոց այդ «թշուառներին»—Դաբբէլ Այվազեանցին և Համբար Առաքելեանցին ամբողջ Ախալքալաքն ու գաւառը լաւ են ճանաչում, թէ ինչ բարի պատուղներ են: Դրանց առաջինը յայտնի Սանտաձէների հոգևոր եղբայրն է, երկրորդն էլ մի փոքրիկ բան պակաս: 30 դեսեատին հող տրված է այդ երկուսին այն պայմանով, որ գրանք հերկեն, ցանեն, հնձեն, կալսեն, վերցնեն իրանց օգտին սերմը և բոլոր յարդը (այս երկու պայմանը պ. Սալլիմեանը հեռատեսութեամբ մոռացութեան է տալիս), իսկ մնացած արդիւնքը կիսեն հողատիրոջ հետ: Ախալքալաքում այդ աշխատութիւնների վերաբերմամբ ընդունված են հետևեալ գները. մի դեսեատինի հերկելը արժէ 6 բուբլի, ցորենը 3 բ., քաղելը նոյնպէս 3 բուբլի. իսկ ցորենը կալսում են գիւղացիները՝ յարդի կէսը իբրև վարձատրութիւն ստանալով: Ուրեմն գիւղացին այս դէպքում իւրաքանչիւր դեսեատինի վրա դնում է 12 բուբլու աշխատանք: Իր կողմից Ցարուբիւնեանցը վճարում է հողի կապալավարձը և իրան հասնելիք յարդի կէսը: Ցիսուն դեսեատին հողը, որի մօտ 6 դեսեատինը մշակութեան համար բոլորովին անյարմար քարքարոտ է, աճուրդով վերցված է դեսեատինը 5 բ. 46 կոպ.: Անցեալ 1898 թ. առանց մի կոպէկ արդիւնք ստանալու՝ Ցարուբիւնեանը վճարել է 273 բ. կապալավարձ, 8 բուբլի արտի պահապանի վարձ, մօտ 35 բուբլի նոտարական պայման կապելու ծախս, և 91 բուբլի քաղաքային վարչութեանը գրաւական. չեմ հաշուում մանր ծախսերը, որոնք ինձ յայտնի չեն, ընդամենը՝ 407 բ.: Այդ դումարը իր համարեա 2 տարվայ տոկոսով (Ցարուբիւնեանը դրամատէր չէ և բոլոր հարկաւոր գումարը վերցրել է ուրիշից, տոկոս վճարելով) պէտք է բաժանել կապալամիջոցի մնացած տարիների վրա, որով իւրաքանչիւր տարվայ կապալահարկը հասնում է մինչև 370 բուբլի, կամ իւրաքանչիւր դեսեատինը նստում է կապալառուի վրա մօտ 8 բ. 50 կ., մինչև անգամ դրանից էլ աւելի, որովհետև վերև յիշած 10 դեսեատինը քաղաքային դպրոցին տրված է ոչ թէ 8 բ. 50 կ., այլ 6 բ. 50 կոպէկով: Միւս կողմից մի դեսեատինից դուրս եկած ցորենի կամ գարու յարդը արժէ ամենաքիչը 10—12 բուբլի: Այդպիսով Ցարուբիւնեանցը իւրաքանչիւր դեսեատինի վրա գիւղացու 12 բուբլու դէմ դնում է 8 բ. 50 կ., հողի կապալահարկ, և 5—6 բուբլի իրան հասնելիք յարդի արժէքը, այսինքն 13 բ. 50 կոպ. մինչև 17 բ. 50 կ.: Այդ լաւ էր հասկացել կուլիկամցի Դաբբէլ Այվազեանցը, որը իր ձեռքի ուրիշ հողերը թողնելով՝ եկաւ այդ հողերը վերցրեց: Ես հաստատ տեղեկութիւն ունիմ, որ այս տարի պ. Ցարուբիւնեանը իր արած ծախսի կէսը հազիւ է վերցրել. դրանից աւելի նա դժուար թէ կարողանար տալ: Միւս կողմից այս տողերից պարզ է, որ Սալլիմեանի սրտացաւական ֆիրաղան, իբր թէ «հողից զուրկ տգէտ գիւղացին ստիպված է եղել տեսնելու ինտելիգենտ կապալառուին»՝ կեղծիք է, սուտ արցունք: Այվազեանի նման գիւղացիները, առանց նոյնիսկ Սալլիմեանների հոգը պաշտպանութեան՝ հողի կարիք չեն քաշում Ախալքալաքի գաւառում:

Ես վերջացրի իմ ասելիքը: Ճշմարտութիւնը, ինչպէս միշտ կրկնել է «Մշակը»՝ լոյսից չէ փախչում:

Տիգրան Գիւզալեանց

ՆԵՐԳԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Թիֆլիսի եկեղեցիներից մէկի, այն է Կուկիոյ Նորաշէն ս. Աստուածածնի հաշիները մնում էին անյայտ նրա ծխականներին: Երկու տարի սրանից առաջ նախկին երէցփոխ Ե. Աբրահամեան վերջապէս կազմեց հին տարիների հաշիւը և ներկայացրեց հոգևոր իշխանութեան: Ծխականների ժողովը իր կողմից ընտրել է երեք հաշուեսու՝ մատեանները քննելու և հաշիւները ստուգելու համար: Մեզ հաղորդում են, որ հաշուեսուներից երկուսի ստորագրութեամբ պատրաստվել է քննութեան հետևանքը և ներկայացվել հոգևոր իշխանութեան, որ և պէտք է հրապարէ ծխականների ժողով՝ հաշուեսուների զեկուցագիրը լսելու և նրա մասին որոշում կայացնելու համար:

—

Թիֆլիսի նոր բացվելիք առևտրական դպրոցի տեսչի պաշտօնի համար հրաւիրված է Օդէսայի առևտրական դպրոցի տեսուչ պ. Ֆիշէր, որ և տուել է այդ պաշտօնի համար իր համաձայնութիւնը:

—

Ամենայն ինչ կը թացնէր. նրանց աղիողորմ բառաչները Աստուածուն էլ լսելի չէին լինում:

Բնութեան հասցրած այդ աղէտների պատճառով, մի կալուածատէր մօտ 4 հազար դեսեատին հողից հազիւ 300 բ. եկամուտ ստացաւ այս տարի: Նոյն կալուածքում մի քանի հարիւր դեսեատին հող այնպէս էր ծածկվել քարերով ու աւազով, որ անծանօթ մարդը չէ կարող երևակայել, թէ այնտեղ երբևիցէ արտեր են գոյութիւն ունեցել կամ բուսականութիւն է եղել:

Այդ անագին վնասը կառավարութեանը անյայտ մնաց, որովհետև տեղական վարչութեան կողմից արձանագրող չեղաւ: Եթէ մօտ 4 հազար դեսեատինից կալուածատէրը հազիւ 3 հարիւր բուբլի եկամուտ ստացաւ, ապա ինչ եկամուտ պէտք է ստանային այն գիւղացիները, որոնք մի քանի դեսեատին միայն հող ունեն: Նրանց դարդն էլ արձանագրող չեղաւ...:

Ես ցանել էի մօտ 300 պուդ սերմ, կէսը ջրովի, իսկ կէսը «դէմի» հողերում. «դէմի» ցանքերը արդէն չորացել էին երաշտից: Երբ աղէտից յետոյ մտայ գիւղը՝ թուրք գիւղացիներից մէկը լացակցված մօտեցաւ ինձ և ասաց.—«աղա, ջրաղացներդ ջուրը տարաւ, իսկ ջրովի արտերից երկու սօտարէն տեղ *) միայն ազատվեց»: Ազատվածն էլ քեզ եմ ընծայում, ասացի ես: Այն բոլորին նա ինձանից աւելի թշուառ էր: Չեմ կարող նկարագրել նրա ուրախութեան և փառաբանութեան չափը՝ այդ փոքրիկ ընծայի պատճառով, որի եկամուտը, ծախքը դուրս եկած, միայն 7 բ. եղաւ:

Բնութեան հասցրած այդ աղէտները, որ նկարագրեցի առանց մի չափազանցութեան, կարող է ճիշտ պատկեր տալ ընթերցողին, թէ ինչ մեծ հարուած է հողագործի տնտեսութեանը, թէ ինչպէս նա զրկվել է ամեն բանից: Ինչով մնուցանէ նա իր կնոջն ու զաւակներին, ինչով ծածկէ ընտանիքի մերկութիւնը, որտեղից սերմ ճարէ ցանք անելու, որպէսզի առաջիկայում գոնէ ապահովութիւն ունենայ, որտեղից պետական ու հասարակական հարկն ու ծախքերը վճարէ: Աւելի սարսափելի է այն միտքը, որ շուտով ձիւնը կը ծածկէ հողը, որից յետոյ ամեն բան կորած է:

Բնութեան աղէտը մի անգամ ևս եկաւ ապացուցանելու ժողովրդի անպատրաստ լինելը: Այսպիսի յուսակտուր ժողովուրդը ումից պէտք է օգնութեան յոյս սպասելիս լինի: Նրա համար վաշխառուն էլ մեծ փրկիչ է այժմ, եթէ նրան էլ կարողանայ գտնել:

Ո՞րոնք են գիւղացու նախապատրաստութեան, ինքնօգնութեան միջոցները, որ նա խորշի վաշխառուից և չը դիմէ վաշխառուի օգնութեանը:

Ամեն օր, աղեկտուր արտասուքով, դիմում են ինձ թշուառացած գիւղացիներ՝ մի օգնութիւն խնդրելով. և ես, որ ամբողջ էութեամբս հակառակ եմ վաշխառուներին, քաջ տեղեակ եմ նրանց ոստայնի թելերի ուժին՝ ամենայն սիրով կը հաւքուրէի առաջին պատահած վաշխառուի ձեռքը և բախտաւոր կը համարէի ինձ՝ եթէ կարողանայի նրանից ամենածանր պայմաններով միջոց ստանալ և օգնութեան գալ թշուառ գիւղացիներին:

Հասկանալի է այժմ, թէ ինչն է վաշխառութեան արժատը զարգացնողը:

Անշուշտ, բնութեան պատճառած վնասը, որ նկարագրեցի վերևում, ոչ առաջինն է և ոչ վերջինն է լինելու. և դա դժալի է աւելի ու կորստաբեր այն ժողովրդի համար, որը ընկած է խորը, անթափանցելի տգիտութեան մէջ, որը զուրկ է նախապաշտպանողական ինքնօգնութեան միջոցներից, որը զրկված է հաղորդակցութեան կանոնաւոր, արագ միջոցներից:

Ճանապարհների կանոնաւորումն, հողագործական գիտութիւնների տարածելը, գիւղական բանկ և հացի հասարակական շտեմարաններ բանալը. ահա խնդիրներ, որոնք միակ զբաղեցնողը պէտք է լինէին, ահա թէ ինչով պէտք է ծանրաբեռնված լինի վարչութիւնը. իսկ կովկասեան Գիւղատնտեսական ընկերութիւնը այդպիսի խնդիրները վաղուց պէտք է արծարծած, մշակած և կառավարութեան առաջը դրած լինէր լուծելու համար:

Եւ մենք համոզված ենք, որ այդ մի քանի խնդիրների, թէև ծանր, բայց աջող լուծումից յետոյ երբէք վաշխառութիւնը մեր երկրում գոյութիւն չի ունենայ և նրա դէմ անօգուտ տրտունջ յայտնելու տեղիք չի լինի:

Յովհաննէս Խօջաէյնաթեանց

Իգդիր.

*) 6 պուդ սերմի տեղ:

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ Ֆինանսների մինիստրութեան մէջ այս տարվայ վերջերին քննվելու է մի շատ հետաքրքիր հարց՝ մասնաւոր կալուածատէրերի հողերում գտնվող հանքային հարստութիւններից օգտվելու եղանակի վերաբերմամբ։

—

Աստղային անձնների մասին դեռ չեն ժողովված ամեն կողմից տեղեկութիւններ։ «Новости» լրագրին հեռագրում են Վիէննայից, որ աստղային անձրևի մասին տեղեկութիւնները անբաւարար են։ Վիէննայում նոյեմբերի 3-ին երկինքը ծածկված էր ամպերով, իսկ առաւօտեան սաստիկ անձրև տեղաց։ Լեռներում երևացին քիչ թափվող աստղեր։ Հնդկաստանի Դելի քաղաքից հեռագրում են, որ Վիէննայի արշաւախմբին չաջողվեց որևէ հետազօտութիւն անել։

—

ՍՂՆԱԽԻՑ մեզ գրում են. «Թէ Սղնախում և թէ նրա գաւառում շատ է տարածված ծաղիկ տիւանդութիւնը։ Գիւղերում ծաղիկը շատ երեխաներ է կոտորում։ Գիւղացիները, հասկանալով պատուաստման անհրաժեշտութիւնը՝ խմբերով տանում են իրանց երեխաներին ֆելդշէրների մօտ պատուաստելու համար»։

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ, նոյեմբերի 1-ից, գրում են մեզ. «Երեկ, հոկտեմբերի 31-ին, իր գոյութեան 20-րդ տարում, փակվեց այստեղի ս. Մեսրոպեան գրաղարան-ընթերցարանը։ Աղմինիստրացիայի ներկայացուցիչը գրացուցակներով ստուգեց ռուսերէն և հայերէն գրքերն ու պարբերական հրատարակութիւնները և ցուցակագրեց մնացած գոյքը (ընդամենը մօտ 4 հազար ռուբլու գիրք և ուրիշ գոյք) և պիտի յանձնէր անցեալ տարի բացված քաղաքային-ծխական ուսումնարանների վարչութեանը, բայց գրաղարան ընթերցարանի հիմնադիր-անդամների մի յայտարարութեան հիման վրա մեր գաւառապետը առայժմ միայն կնքեց դռները և դիմեց նահանգապետին նոր զեկուցումով։ Ընթերցարանի փակելու հարցը սկսվել է մօտ տարի ու կէս առաջ նախկին գաւառապետ, այժմ հանգուցեալ, իշխան Թարխանովի մի թղթի հիման վրա, որով ապացուցանում էր, որ գրաղարան-ընթերցարանը պատկանում էր հայոց նախկին ուսումնարաններին, որովհետև նրան հիմնել են այդ ուսումնարանների տեսուչը և ուսուցիչները և նրանով օգտվելիս են եղել երկու սեռի ուսումնառուները, բացի դրանից՝ կանոնադրութեան մէջ ասված է, որ լիկվիդացիայի դէպքում ամբողջ գոյքը դառնում է այդ ուսումնարանների սեփականութիւն։ Իշխան Թարխանովի այդ թուղթը երկար ժամանակ մնացել էր առանց հետևանքի, միայն այս օրերս նահանգապետը կարգադրեց, որ գրաղարան-ընթերցարանը յանձնվի ներկայ ուսումնարաններին։ Գործը այսպէս անորոշ դրութեան մէջ էր, որ ուսումնարանական իշխանութեան ներկայացուցիչը, Թիֆլիսի նահանգի ժողովրդական դպրոցների տեսուչ Բօգդանով, այս տարվայ մայիսի սկզբին առաջարկեց գրաղարան-ընթերցարանը յանձնել քաղաքին այն պայմանով, որ քաղաքային վարչութիւնը միջնորդէ ուր հարկն է՝ որ նա վերակոչվի «Պուշկինեան»՝ բանաստեղծի ծննդեան 100-ամեակի յիշատակին։ Հիմնադիր-անդամների ժողովը, մայիսի 16-ին կայացած իր նիստում, որոշեց գրաղարան-ընթերցարանը յանձնել քաղաքին, Բօգդանովի առաջարկած պայմանով։ Ահա այս հարցի մասին երեկ հիմնադիր-անդամները մի յայտարարութիւնով խնդրեցին գաւառապետից, որ գրաղարան-ընթերցարանը նուիրվի քաղաքային վարչութեան և վերակոչվի «Պուշկինեան», մանաւանդ որ ընթերցարանի ներկայ շինութիւնը, որով երբէք չեն օգտվել ուսումնարանները, բարեգործական միջոցներով շինված է եկեղեցական հողի վրա այն պայմանով, որ ընթերցարանը փակելու կամ նոյն-իսկ ուրիշ տեղ փոխադրելու դէպքում այդ շինութիւնը դառնայ եկեղեցու սեփականութիւն։ Գաւառապետ Պօդգուրսկի համաձայնվեց միջնորդել նահանգապետի առաջ։ Մի խնդիր էլ նահանգապետի անունով պատրաստեցին տեղական զինուորական և քաղաքացիական ծառայողները, առանց ազգի խորութեան, որ նահանգապետը բարեհաճ կարգադրել նորից բանալու ընթերցարանը։»

—

ՍՂՆԱԽԻՑ մեզ գրում են. «Այս տարի առատությունը թէ քաղաքում և թէ գաւառում զգալի կերպով բարձրացաւ։ Այս հանգամանքը պէտք է վերագրել այս տարվայ զինու աջող բերքին»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թաւրիզ, նոյեմբերի 1-ին

Աշխարհի կործանման երկիւղն, ահա մի քանի ամիս է, զբաղեցնում է տեղիս հասարակութեան անխտիր։ Թէև պարսիկների մի մասը չէ հաւատում դրան, համարելով այդ քրիստոնէի գուշակութիւն, սակայն միւս մասն հաւատում է, իսկ հայերից ոչ քիչ մասն համոզված է, որ այս շաբաթ աշխարհս պիտի կործանվի, համոզված են առաւելապէս կանայք, որոնց խօսակցութեան անսպառ նիւթ է դարձել այդ։ Նրանք միշտ երկիւղի մէջ են և հաւատում են, որ եթէ «աստղն էլ գալու չը լինի՝ բայց մի բան անպատճառ կը պատահի, աշխարհս քարուքանդ կանէ»։

Անցեալ օրը տեղիս բողոքական միսիոնարութիւնն այդ առիթով մի դասախօսութիւն էր պատրաստել, որը գրաւել էր անհամար բազմութիւն թէ Ղալայից և թէ Լիլաւայից։ Ամբողջ վերնատունը խռնված էր մեծ բազմութիւն, այր ու կին։ Գ. դասախօսը կիսատ-պռատ, անհասկանալի աստիճան խօսեց գիսաւորների և մոլորակների մասին, հաւաստիացնելով ժողովրդին, որ այդպիսի դէպք պատահելու շատ քիչ հաւանութիւն կայ, թէև կարող են ասուպներ ընկնել։

Սակայն ժողովուրդը դեռ յուզված դրութեան մէջ է գտնվում և սարսափով սպասում է այս շաբաթվայ վերջին։

Ինչպէս երևում է՝ ներկայ դատաւորը շատ անկաշառ և ժողովրդի ցաւերն հասկացող մարդ է. կարճ ժամանակամիջոցում կարողացաւ յայտնի ամբարատէրերին յորդորել, որ ամեն մէկն ըստ իր կարողութեան ցորեն տայ, ծախէ տէրութեան վրա, այնպէս որ այժմ բերդում ամբարված է ահագին քանակութեամբ ցորեն, որ ինչպէս ասում են, մի ամբողջ տարի կը բաւէ Թաւրիզի ժողովրդին. հացը շատ առատ և մաքուր է, միևնոյն ժամանակ էժան, համեմատած անցեալ տարու հետ։ Անընդհատ ցորեն են բերում քաղաք, և ամբողջ ժողովուրդը կշտացած է ցորենից։

Ֆարրօ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Անգլիական լրագիրները աշխատում են հաւատացնել, որ Ռուսաստանի և Եապոնիայի յարաբերութիւնները վերջին ժամանակներս լարվել են և որ, ընդհակառակը, Եապոնիայի և Չինաստանի յարաբերութիւնները օրէցօր աւելի մտերմական են դառնում։ Լրագիրներից մէկը մինչև անգամ այն կարծիքն է յայտնում, թէ Եապոնիան հէնց այժմ պէտք է աշխատի լուծել մի քանի վիճելի հարցեր, որոնք գոյութիւն ունեն նրա և Ռուսաստանի մէջ, քանի որ վերջինս դեռ չէ աւարտել Սիբիրի երկաթուղին։ «Daily Mail» լրագիրը ասում է, որ Եապոնիայի և Չինաստանի մէջ բարեկամական յարաբերութիւններ հաստատվելը անհրաժեշտ է։

—«Soleil» լրագրի Պետերբուրգի թղթակիցը հետևեալ ֆանտաստիական պատմութիւնն է անում այն բանի մասին, թէ ինչպէս Անգլիային մօտ օրերս աջողվեց ազատվել երեք մեծ պետութիւնների դիպլոմատիական միջամտութիւնից։ Եթէ Անգլիան հրաժարվէր ընդունել միջամտութիւնը՝ այն ժամանակ այդ մերժումը պատերազմի առիթ կը լինէր և, հետևաբար, Անգլիան ստիպված կը լինէր պարտութիւն կրել ամեն կէտերում։ Ո՞վ ազատեց Անգլիային։ Որպէս թէ Ֆրանսիան, որ վերջին րոպէին հրաժարվեց մասնակցել առաջարկված պայմաններին, առարկելով, թէ բաւարար նաւատորմ չունի և զօրքի բարձր վարչութիւնը կազմալուծված է։ Ֆրանսիայի հրաժարվելու պատճառով, որպէս թէ Ռուսաստանը աշխատեց մօտենալ Գերմանիային։ Բայց Ռուսաստանը և Գերմանիան առանց Ֆրանսիայի օգնութեան չեն կարող իրագործել իրանց ձեռնարկութիւնը և ստիպված կը լինեն բաւականանալ վարձատրութեան քաղաքականութեամբ։ Գերմանիան ստացաւ Սամօա, Ռուսաստանը հովանաւորութիւն կը հաստատէ Աւղանիստանում և, շատ կարելի է, նրան կաջողվի ոչնչացնել զինուորական նաւերի ջրանցքներով անցնելու պայմանագիրը։

—Բերլինի քաղաքական շրջաններում գտնում են, որ Սօլիսբիւրիի ճառի մէջ ամենահետաքրքրականը այն մասն է, որտեղ խօսում է Միացեալ-Նահանգների և Գերմանիայի հետ ունեցած ամենալաւ յարաբերութիւնների մասին և թէ Անգլիան թոյլ չի տայ ոչ մի պետութեան միջամտելու Անգլօ-Տրանսվաալեան ընդհարումներին։ Այնու ամենայնիւ գերմանական լրագիրներից մի քանիսը այն կարծիքի են, թէ հարաւ-աֆրիկեան պատերազմը, եթէ նա երկար ժամանակ տևէ՝ կարող է առաջացնել միջազգային բարդութիւններ, թէպէտ և տեղի չի ունենայ ոչ մի միջամտութիւն այն մտքով՝ ինչ մտքով մերժում է այդ լորդ Սօլիսբիւրի։ «Vossische Zeitung» լրագիրը, օրինակ, կարծում է, որ եթէ անգլիացիք մօտ ժամանակներում մի փառաւոր յաղթութիւն չը տանեն Տրանսվաալում՝ շատ հաւանական է, որ տեղի ունենայ աղէտ թէ Աֆրիկայում և թէ Հնդկաստանում։ «Լօրդ Սօլիսբիւրի բաւականաչափ սիրալիր խօսքեր շռայլեց Գերմանիայի և Սպանիայի հաստատիներին, ասում է լրագիրը, բայց նա անտես արաւ Ֆրանսիան և Ռուսաստանը։ Հէնց այդ վանյաառութիւնն էլ կազմում է նրա ճառի ամենահետաքրքիր մասը, նա մանաւանդ եթէ նրան համեմատենք նոյն լօրդ Սօլիսբիւրիի այն խօսքերի հետ, որտեղ նա յայտնում է, թէ Անգլիան թոյլ չի տայ ոչ մի միջամտութիւն բօէրների հետ իր ունեցած միջադէպքում։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

9 նոյեմբերի

ԼՕՆԴՕՆ։ «Բէյտերի գործակալութիւն»։ «Times» լրագրին հեռագրում են Տօկիօից, նոյեմբերի 8-ից. «Հնդկա-չինական գեներալ-նահանգապետը հեռագրել է այստեղի ֆրանսիական դեսպանին, որ Կվան-Չժու-Վանում տեղի ունեցած դէպքերը չափազանցացրած են այն աստիճան, որ ծիծաղելի են դառնում։ Տեղի են ունեցել միայն մի քանի աւազակային գործողութիւններ, որից յետոյ պատժի են ենթարկվել յանցաւորները։ Ֆրանսիական ծովապետի և չինաց կառավարութեան մէջ կատարեալ համաձայնութիւն է տիրում»։

ԼՕՆԴՕՆ։ «Բէյտերի գործ.»։ «Daily News» լրագրին հեռագրում են Կիմբերլէից, հոկտեմբերի 27-ից, որ հեծելազօրքի մի փոքր խումբ այսօր, խուզարկութեան ժամանակ, յարձակման ենթարկվեց բօէրների կողմից։ Թշնամին ջարդվեց և կորցրեց 12 մարդ։ Անգլիացոց կողմից վիրաւորված են երկու մարդ։ Երկրորդ ճակատամարտը տեղի ունեցաւ քիչ ժամանակից յետոյ, Կարտէր ագարակի մօտ։ Անգլիացիք կորցրին երկու մարդ և յետ նահանջեցին։ Քաղաքի ռմբակոծումը շարունակվում է կարճ ընդհատումներով ամբողջ օր։ Սպանված է մէկ տեղացի։

ԴՈՒԲԲԱՆ։ «Բէյտերի գործ.»։ Ինչպէս հեռագրում են Էստկօրտից «Natal Advertiser» լրագրին՝ 700 բօէրներ, որ եկել էին Վէնէնից՝ գրաւեցին Երկկ Տուրմեր ագարակի մօտ զօրեղ դիրք, Էստկօրտից դէպի հարաւ 14 մղոն հեռաւորութեան վրա, Մօոյ գետից դէպի հիւսիս-արևմուտք։ Բրիտանական հետևակ զօրքը և կարաբինէրները թշնամուն կռուի հրապուրեցին։ Թշնամին, որ, լուրերին նայելով, կորցրեց երեք մարդ՝ յետ նահանջեց, տանելով իր հետ ագարակից 200 տուար։

ԼՕՆԴՕՆ։ «Բէյտերի գործակալութիւն»։ Նատալպօրտից հաղորդում են, նոյեմբերի 3-ից, որ Կօլսբերգում գտնվող 1300 բօէրներին օգնութեան սպասվում են նորից 1500 բօէրներ։ Բօէրների մեծամասնութիւնը ձիաւոր է և ունի մեծ քանակութեամբ զինուորական մթերքներ, ունի իր հետ նամանպէս քսան սայլ ուռնդեղենների պաշար. նրանց ուղեկցում են սնամորթ զինուորված ծառաներ։

ՕՐԱՆԺ-ՐԻՎԷՐ։ «Բէյտերի գործ.»։ Բէյլժոնի մօտ, լուրերին նայելով, կանգնած են 1200 բօէրներ։

ԷՍՏԿՕՐՏ։ «Բէյտերի գործ.»։ Բօէրները, դիրք դրաւելով Էստկօրտից դէպի հիւսիս-արևմուտք՝ այնտեղից չը դուրս եկան կռուի։ Լսվում է, թէ Մօոյ գետի մօտ, հարաւային ուղղութեամբ, տեղի ունի կռիւ։ Բօէրները, որ կանգնած են Լէդիսմիթից դէպի հարաւ՝ եռանդուն կերպով կեր են պատրաստում անասունների համար։

ԿԱՊՇՏԱԴՏ։ «Բէյտերի գործ.»։ Իոհաննէսբուրգում հրատարակվող «Standard and Diggers News» լրագիրը յայտնում է, թէ այն լուրերը, իբր թէ տրանսվաալեան կառավարութիւնը փնջացնում է ոսկու հանքերը՝ հիմք չունեն։ Լրագիրը նկատում է, որ հանքերը շարունակ բանեցնվում են, և ստացված ոսկին գործ է դրվում երկրի անկախութիւնը պաշպանելու գործին։ Պատերազմը վերջանալուց յետոյ փողերը կը վերադարձնվեն։ Եւրոպայի ակցիոներները կարող են հանգիստ լինել, որ հանքերը չեն ոչնչացնվի։

ԼՕՆԴՕՆ։ «Բէյտերի գործ.»։ Երեկոյեան լրագիրներում հրատարակված է հետևեալ հեռագիրը, որ ստացվել է Էստկօրտից, նոյեմբերի 8-ից։ Այժմ դրականապէս յայտնի է, որ գեներալ Փուբէր իր բոլոր ոյժերով գնում է դէպի Էստկօրտի հարաւային կողմը։ Հաւանօրէն Լէդիսմիթի պաշարումը թողնված է։

ՊԱՐԻԶ։ «Հաւասի գործ.»։ Մինիստրների խորհրդում Դէլկասէ հաղորդեց, որ Կվան-Չժու-Վանի սահմանի վերաբերեալ որոշումները ստորագրված են այնպէս՝ ինչպէս պահանջում էր ծովապետ Կուրժօլ։

ՄՕՍԿՎԱ։ Մոսկվայում խուզարկու ոստիկանութիւնը տեղեկութիւն է ստացել, որ Սօկօլովում, Սեղլէցկի նահանգում, տեղական պահապան զօրքը ձերբակալել է Սիբիրից փախած, բէվոլվերով զինուորված, Գրիգորիյ Պետրօնիկին, 25 տարեկան, որի մօտ գտել են բաւականին ոսկեղէն և արծաթեղէն իրեր, թանգագին քարերով. մի քանիսի վրա կան գլխատառեր։ Կարծում են, որ այդ իրեղէնները գողացված են Պետերբուրգում։

10 նոյեմբերի

ԼՕՆԴՕՆ. «Բէյտերի գործ.»։ Հանդիսաւոր բանկետի ժամանակ, Վիլհէլմ կայսրը նստած էր Վիկտորիա թագուհու աջ կողմը։ Թագուհու ձախ նստած էր գերմանական կայսրուհին, աջ կողմից ունենալով Ուէլսի իշխանին։ Ստատսէկրետար Ֆօն-Բիւլով նստած էր պալատական տիկին Դէրբֆօրի կողքին։ Ֆրանսիական և սպանական դեսպանները նստած էին ղէմուդէմ։ Բանկետի ժամանակ երեք կենաց առաջարկվեց.—Վիկտորիա թագուհու, կայսերական զոյգի և այրի կայսրուհու համար։ Գլխաւոր սանդուխի վրա շարքով կանգնեցրած էին լեյբ-գվարդիայի զինուորներ։

ՊՐՆՏՕՐԻԱ։ «Բէյտերի գործ.»։ Գլխաւոր բանակից հեռագրով ստացվել է տեղեկութիւն, որ այս առաւօտ ներկայացրվեց զինուորական խորհուրդին, որ տևեց 2 ժամ։ Տեղեկութեան մէջ ասված է, թէ շաբաթ օրը Էստկօրտի ուղղութեամբ լսում էր խիստ թնդանօթաձգութիւն, ինչպէս և Լէդիսմիթի կողմից երկար ժամանակ լսում էին թնդանօթի հարուածներ։ Նոյեմբերի 8-ին, առաւօտեան, անգլիական մի փոքր զօրաբաժին դուրս յարձակվեց, բայց յետ մղվեց։ Վալբանկի մօտ գերի առնվեցին և Պրետորիա ուղարկվեցին 6 կարաբինէր։

ԴՈՒԲԲԱՆ, 9 նոյեմբերի, երեկոյեան 11 ժամ։ «Բէյտերի գործ.»։ Էստկօրդի հետ հաղորդակցութիւնը խզված է։

ԿԱՊՇՏԱԴՏ։ «Բէյտերի գործ.»։ Հաղորդում են, թէ Կապշտադտի պարլամենտի երկու անդամ, Վանդէրվալ'դ և Գօբէր, Կոլէսբէրգում միացան բօէրների հետ։

ՊԱՐԻԶ։ «Հաւասի գործ.»։ Բարձրագոյն դատարանում վերսկսվեց Դրէյֆուսի հարցափորձը։ Դրէյֆուս պնդում է, թէ երբէք դաւադիր չէ եղել և ոչ մի դաւադրութիւն չէ կազմել։ Մեղադրվածը պատմում է այն զրկանքները, որոնց ինքը ենթարկվեց Շաբրոլ՝ ամբոցում, և յայտնում է, թէ երբէք փափաքաւոր հարուած չէ արձակել ոստիկանութեան անդամների վրա։ Սկսվում է Դիւբիւկի հարցափորձը։

ՎԻԵՆՆԱ։ Պառագաւորների ժողովը շարունակում էր քննել այն առաջարկը, որ Տունի մինիստրութեան անդամները դատի ենթարկվեն, և այս մասին վիճաբանութիւնների շարունակութիւնը յետաձգեց մինչև վաղը։

ԲԵՐԼԻՆ։ Լրագիրներին հաղորդում են Լօնդօնից, թէ Կապշտադտից ստացված հեռագրերին նայելով՝ Բէչուանայի բրիտանական մասում, Կուրումանի մօտ, բօէրները ջարդվել են անգլիացիներից։ Մանրամասնութիւններ չեն հաղորդված։ Բօէրների ներս խուժելը դէպի Կապի կոլոնիան աւելի և աւելի ընդարձակ ծաւալ է ընդունում։ Ալիվալ'-Նորթ, Բուրդէրստորպ, Կոլ'սբէրգ և Կէմբրէլ անցել են թշնամու ձեռքը։ Սպասվում է, որ Զէմստոունն էլ նոյն վիճակը կունենայ։ Բօէրները սիստեմաթար այս քաղաքները ենթարկում են հանրապետութեան իշխանութեան։ Աֆրիկանդէրներին եղած հրաւէրը, միանալու բօէրների հետ՝ մինչև այժմ անհետևանք է մնում։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱ

9 նոյեմբերի

Մուրհակների ընթացքը		
Երեք ամսով Լօնդօնի վրա 10 ֆունտ	.	93,50
„ „ Բերլինի վրա 100 մարկ	.	45,62½
„ „ Պարիզի վրա 100 ֆրանկ	.	37,12½
Չեկը „ Լօնդօնի վրա 10 ֆունտ		94,65
„ Բերլինի վրա 100 մարկ		46,30
„ Պարիզի վրա 100 ֆրանկ	.	37,50
Հօրային դիսկօնտ	.	6½—7½
4% պետական բէնտա	.	99⅝
4% ազն. կալ. բանկի գրաւ. թղթ.	.	98¾
4½% վկայակ. գիւղ. հող. բանկի	.	98½
5% վիճակ. տոմս. առաջին ներքին փոխ.		318
5% „ „ երկրորդ „ „	.	276½
5% „ գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի.		218½
5% ոսկու բէնտա	.	
5% գրաւ. թղթ. փոխ. հող. վարկի ընկ.		
4½% ներքին երկաթուղ. փոխ. 1890	.	100⅛
Նոյն „ „ 1892	.	100½
5% Թիֆլիսի վարկի ընկեր.	.	—
4½% Թիֆլիսի կալուած. բանկի	.	95
6% Բուլմարոյի կալուած. բանկի	.	100
5% „ „	.	101
Ակցիաներ Ռուս. առևտր.-արդիւն. ընկ.		252
Եղբ. Նոբելի նաւթ. ընկեր.	.	708
Կասպիական ընկ.		707
„ Բաքուայ նաւթ. ընկ.	.	827

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից:

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.
Կ. Մ. ՁԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.
Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ.
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և թեթեւայոց հ.
սԱ. Գ. ԳՈՒՐԿՕ—1½—2 ժ. ներքին և միաեռական հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—5—6 ժ.
Ա. Ն ՇԳԱԿՕՎՍԿԻ—6—7 ժ. նեարդային (ելեքտրաբուժութիւն), վեներական և մորթի հ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.
Տ. Ի. ԲՈՒԴԵՆԿՕ—քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է անում մէզի, խիրի, արեան և այլն:

Վճար 50 կ. չքաւորները ձրի: Հաւախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:

Օ. Տ. ԱՌՎԱՆԻՏԱԿԻ—պարապում է տանը ծաղկահատութեամբ, բժշկական մարմնամարզութեամբ և մարդերով. դիմել 11—1 ժ.:

Հիւանդանոցի վերատեսուչ՝
50—150 Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ



ԱԳՈՒԼԻՍՈՒՄ մի հայ ընտանիքի համար հարկաւոր է գիմնազիական կրթութիւն ունեցող

ՎԱՐԺՈՒՀԻ,

որ գիտենայ և հայերէն: Վարժուհին պէտք է պարապի երեք երեխայի հետ, 500 բուբլի ռուբլիով, և ապրի նոյն ընտանիքում:

Պայմանների մասին մանրամասն տեղեկանալ Ե. Ցարութիւնեանի մասնաւոր դպրոցում, Бебутовская, № 38. (Ե. Հ. չ.) 1—5

ԿԱՐԱ-ՄՈՒՐԶԱՆ

տալիս է ընտանիքներում մասնաւոր դասեր հայկական ազգային և ժողովրդական երգերի. Разъѣзжая № 9. д. Поповой, близъ памятника Воронцову. 1—5

ԲԺԻՇԿ Գ. Ս. ԳԵՐՑՖԷԼԴ

Մաղերեան փողոց, № 5.

որ մասնագէտ է կաշու, միզասեռական (էլեկտրականութեամբ), վեներական և սիֆիլիսի հիւանդութիւնների

ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՎ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ

Ընդունում է հիւանդներին ամեն օր

Առաւօտեան 9—12 ժ.
Երեկոյեան 5— 8 ժ.

59—60

ՄԵՐՎՈՒՄ, Անդրկասպեան նահանգում, ընտանեկան հանգամանքներից ստիպված, **ԾԱԽՎՈՒՄ Է ԴԵՂԱՏՈՒՆ** յատուկ բաժանմունքով, դեղավաճառանոցի խանութով և տնով, 26,000 բուբլիով, որոնցից 10,000 բուբլի կանխիկ, իսկ 16,000 ր. մաս մաս վճարումներով, հաշուելով 6%: Տարեկան եկամուտն է՝ 9,399 դեղատոմսերից մօտ16,000 բուբլի

Հասցէն. Мервъ, Аптекарю. 9—10

ԲԱԴՈՒ—ՍԵԻ ՔԱՂԱՔ

Մարգարեանի գործարանում բացված է ԿԵՐՈՍԻՆԻ, ԳԱԶՈԼԻՆԻ, ՍՕԼԵԱՐԻ ԻԻԴԻ և այլ

ՆԱԻԹԱՑԻՆ ՄՆԱՑՈՐԴՆԵՐԻ

ՊԱՀԵՍՏ

Յանկացողներին կարելի է տալ և վագոններով: Դիմել՝ Черный городокъ, Михаилу Канджунцову, заводъ Маркарова. (Ե. Հ. չ.) 10—10

Լոյս տեսաւ

ԷՄՄԱՆՈՒԷԼ ՔԱՀ. ՆԱԶԱՐԵԱՆԻ

„Ընտիր Հատուածներ“

Ա. մասը—Արձակ
Զորրորդ տպագրութիւն:
Գինը՝ 1 ր., գումարով՝ 80 կոպ.

Ծախվում է Կենտրոնական գրավաճառանոցում: (Հ.) 4—5

ԲԺՇԿ. ՎԱՀԱՆ ԱՐԹՐՈՒՆԻ

Վերանորոգել է հիւանդների ընդունելութիւնը բկի, կոկորդի, քթի և ականջի հիւանդութիւնների համար իր նոր բնակարանում, Սօլօլակ, Սերգիեվսկի փող., տ. Ծովիանովի: 9—10

ԲԺԻՇԿ Յ. Յ. ՂՕԿԻԵԼԵԱՆ

Ընդունում է՝ վեներական, ախտական, մորթ. և ներքին հիւանդութիւն ունեցողներին՝

Առաւօտեան 9—12 ժամը
Երեկոյեան 5—7 ժամը:

Գանձակայա փողոց, տուն Մարգարով, № 31: (Ե. Հ. չ.) 92—100

ՆԵՐՍԻՍԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆԸ

յայտարարում է ի գիտութիւն որոց կը վերաբերի, բարձրաստիճան Ստեփան Ղամբարեանցի ամուսին հանգուցեալ Նունէ Ղամբարեանցի հետեւեալ նուիրատուութեան և նրա պայմանների մասին, որոնք արած են 1891 թուի օգոստոսի 28-ին:

«Յանկանալով յորդորել Թիֆլիսի Ներսիսեան հոգևոր դպրանոցի և ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի սաներին, աւարտելուց յետոյ շարունակելու գործել գրականական ասպարիզում և միևնոյն ժամանակ վարձատրել նրանց գրական գիտական առաջին աշխատութիւնները Կովկասի և Փոքր Ասիայի ազգութիւնների պատմութեան, գրականութեան և ազգագրութեան ուսումնասիրութեան վերաբերեալ՝ յարգելի հոգաբարձութիւնից խնդրում եմ ընդունել յօգուտ Ներսիսեան հոգևոր դպրանոցի նուէր ինձնից երեք հազար բուբլի 4% արժէթղթերով և գործադրել հետեւեալ կերպով: 1) Իմ նուէրը պիտի լինի անձեռնխմելի մայր գումար, այդ գումարից գոյանալիք %%-ից, որ չորս տարուց կը հասնի մօտ հինգ հարիւր բուբլի՝ ամեն չորս տարին մի անգամ պիտի տրվի երկու մրցանակ՝ առաջինը մօտ չորս հարիւր բուբլի և երկրորդը հարիւր ռուբլի, որպէս վարձատրութիւն ամենաընտիր աշխատութիւնների, գրված հայկական լեզուով Կովկասի և Փոքր Ասիայի ազգութիւնների պատմութեան, գրականութեան և ազգագրութեան մասին: 2) Մրցանակաբաշխութեան մասնակցել թոյլատրվում է Ներսիսեան հոգևոր դպրանոցի և ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի այն բոլոր աւարտած սաներին, որոնք իրանց ուսումն աւարտել են մրցանակաբաշխութեան օրից ոչ աւելի առաջ քան հինգ տարի: 3) Մրցանակները տրվում են առանձին մասնախմբից, բաղկացած հինգ հոգուց, որոնց ընտրում է Ներսիսեան հոգևոր դպրանոցի ուսուցչական ընդհանուր ժողովը իր միջից և մասնաւոր անձերից: Որպէս ցանկութիւն, յայտնում եմ կարծիքս, որ գոնէ երկու անդամները միշտ ընտրվին մասնաւոր հեղինակաւոր անձերից»:

Ցիշեալ պայմանների հիման վրա, հանգուցեալ Ղամբարեանցի երկրորդ մրցանակաբաշխութիւնը լինելու է հետեւեալ կերպով:

1) Հեղինակութիւնները պէտք է ուղարկվեն Ներսիսեան դպրոցի հոգաբարձութեանը ոչ ուշ քան 1-ն մայիսի 1900 թուի:

2) Հեղինակութիւնները պէտք է ունենան խորագիր, իսկ հեղինակի անունը պէտք է նշանակած լինի փակ ծրարի մէջ, որ ունի նոյն խորագիրը: Այդ ծրարը բացվելու է միայն մրցանակաբաշխութեան մասին որոշում կայացնելուց յետոյ:

3) Մրցանակաւորութեան հարցը որոշվելուց յետոյ, հեղինակութիւնները կարելի է յետ ստանալ կամ անձամբ, կամ հաւատարմագրով:

4) Մրցանակի արժանացած շարադրութիւնների, նրանց հեղինակների և տարած պրեմիայի քանակութեան մասին կը հրատարակվի լրագիրներում: 1—2

Պատրաստում ենք և ցանկացողներին ուղարկում ամբողջ Կովկասում ամենայայտնի Գանձասարի վանքի քարահանքից ամենաընտիր տեսակի «ՂԱՐԱԲԱՂԻ»



ՁՐԱՂԱՑԱՔԱՐԵՐ

մատչելի գներով և զանազան մեծութեան:

Մեր հասցէն. Евлахъ, контора Меликъ-Пашаянъ.

Որովհետև վերջերս երևացել են նաև ուրիշ հանքերի քարեր, որոնք յատկութեամբ չատ ցածր են կանգնած, ուստի խնդրում ենք ցանկացողներին դիմել միմիայն մեզ:

3—40 Քարահանքի կապալառու՝ Աբրահամ Հասան-Զալալեանց

ՍԱՐԱՏՕՎԻ ՍԱՐՊԻՆԿԱ

1900 Թ. ԱՄԱՌՎԱՅ ՀԱՄԱՐ

ԳԵՂԵՑԻԿ ԹԵԹԵՒ — ԳՈՐԾՈՒԱԾՔ

330

Նմուշներ ալբոմի մէջ

Նոյեմբերից
Ուղարկվում է 56 կ. ժարկաներով
ԱՆԴՐԷՅ ԲԷՆԴԵՐ և ՈՐԴԻՔ
առևտրական տուն
Москва, Петровка,

ԶԳԵՍՏՆԵՐԻ ԵՒ — ՍՊԻՏԱԿԵՂԷՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մանր պատուէրները ուղարկվում են՝ բոլոր տեղերը ՁՐԻ

№ 160690. 2—3

ՇՏԱՊԵՑԷՔ

ԱՄԵՆԱԿԱՐՃ ԺԱՄԱՆԱԿ

Աստեղներ
Միս Էմելինա
Հսկայ-պատանի

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԸ 30 Կ.
ԵՐԿՐՈՐԴ ՏԵՂԸ 20 Կ.

ԳՆԵՐԸ ՊԱԿԱՍԵՑՐԱԾ ԵՆ

Ամենակարճ ժամանակ: 3—10

СЕКРЕТЪ КРАСОТЫ — **ГЛИЦЕРО-ВАЗЕЛИНОВОЕ МЫЛО МОЛОДОСТИ**

А. СІУ и К° МОСКВА. *20 коп. кус.*

М. 109486

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ,

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսոն և Պոլիս: Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, 27 հոկտեմբերի (10/22 նոյեմբերի) ԱՆԱՏՕԼԻ շոգենաւը, նաւապետ ԲԻԱՆԿԻ: Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետո:

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գներով:

Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի և Անտվէրպէնի մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար:

Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝

ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօլին, Նաբէրէժնայա: ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիմոնի փող. Թօշափարուխովի և Մայսուրաձէի քարվանսարա: ԲԱԳՈՒ—եղբ. Վ. և Ի. Մուրադեաններին, Նաբերեժնայա փողոց, տուն Կրասիլնիկովի, № 27: ՆՈՎՈՐՕՍՍԻՅՍԿ—պ. Մելխիոր Հերշենսոնին: (Ե. Հ. չ.) 5—20

Թիֆլիսի Այգեգործական դպրոցը

յայտնում է ի գիտութիւն ընդհանուրի, որ ներկայ 1899 թուի աշնան և 1900 թուի գարնան ծախվում է նոյն այգեգործական դպրոցում, պակասեցրած գներով մօտ 4000 մէկ և երկու տարեկան ամենաընտիր տեսակների մրգեղէն ծառեր և 50,000-ից աւելի զարդածառեր, փշածառեր, մշտադալար և տերևազարդ ծառեր և թուփեր մէկ տարեկան հասակից մինչև հինգ:

(Ե. Հ. չ.) 13—40

Дозволено цензурою Тифлисъ, 10 Ноября 1899 г. Типографія Грузинск. Т.—ва Большая Ванкская, № 27.